ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

26.01.22 № 3/4/1591-22
Ձեր N _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱԻ
ՆԱԽԱԳԱՀ ԷԴՈՒԱՐԴ ԹՈՒՄԱՍՅԱՆԻՆ
(Ք. ԵՐԵՎԱՆ., ՎԱՉԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ Փ 26/3.,
ԷԼ. ՀԱՍՑԵ՝ hamk.hamk@.am)

Հարգելի պարոն Թումասյան

Ի պատասխան Ձեր 2022 թվականի հունվարի 21-ին Առողջապահության նախարարություն մուտքագրված թիվ 2449-2022 դիմումի՝ հայտնում եմ, որ Սահմանադրական դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 23-ի ՍԴՈ-1621 որոշմամբ՝ սահմանադրաիրավական վեճի շրջանակում Սահմանադրական դատարանը շեշտադրում է, որ Առողջապահության նախարարի խնդիրը չէ օրենսդրի, իսկ օրենսդրի կողմից այլ մարմինների լիազորած լինելու դեպքում՝ վերջիններիս փոխարեն որոշել, թե ով է կրում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման ՊՇՌ հետազոտության դիմաց վճարման պարտականությունը: Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման ՊՇՌ հետազոտության դիմաց վճարման պարտականությունը, **անկախ այն հանգամանքից, որ այն բնականորեն կրում է աշխատողը,** այդուհանդերձ, ՊՇՌ հետազոտության ծառայությունների մատուցման իրավահարաբերություններում գույքային պարտականությունների կրողների շրջանակի սահմանումը դուրս է Առողջապահության նախարարի լիազորություններից:

Վերոնշյալ մեկնաբանությամբ Սահմանադրական դատարանի որոշմամբ հակասահմանադրական է ճանաչվել միայն «իր հաշվին» բառակապակցությունը, իսկ

աշխատողի կողմից ՊՇՌ հետազոտության իրականացման պահանջը շարունակում է գործել:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ՝ ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԵԿՐԵՏԱՐԻԱՏ

Կատարող՝ Հեղինե Գալստյան
Իրավաբանական վարչություն
Հեռ.՝ 060 80 80 03 (1622)